ՀՀ Արմավիրի մարզ
«Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (Վաղարշապատ)

«15» դեկտեմբերի 2023 թ. Էլ.փոստ՝ bakhramyan_ejm@mail.ru

Հեռ.՝ 094-61-10-12

# ՈՐՈՇՈՒՄ

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով և ՀՀ «Գնումների մասին» օրենքի 2-րդ մասով՝

Որոշում եմ

«ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում եմ, որ ՀՀ Արմավիրի մարզի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05 սեպտեմբերի 2023թ. կնքված N ԱՄԲՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/01-03 ծածկագրով կնքված պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն էր ս/թ. դեկտեմբերի 25-ը: Սակայն պայմանագրով սահմանված ժամկետում ստանձնած պարտավորությունները չեն կատարվել Կապալառուի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծել է ՀՀ Արմավիրի մարզի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ միջև 05 սեպտեմբերի 2023թ. կնքված N ԱՄԲՄԴ-ԳՀԱՊՁԲ-2023/01-03 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ, Կապալառուին ծանուցվել է, որ օրենքով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը պայմանագրի որակավորման ապահովման գումարները վճարելու դեպքում, պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Սակայն «Ֆոտոն» ՍՊԸ կոնսորցիումը սահմանված 10 /տասը/ օրացուցային օր ժամկետում չեն վճարել տուժանքներով սահմանված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները:

Այսպիսով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ «Ֆոտոն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կապալառուի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կապալառուի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Ք. ԳԱԼՍՏՅԱՆ